

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
ՊԱՇՏՊԱՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾՎԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը եւ Լատվիայի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, այսուհետեւ՝ Կողմեր,

ճանաչելով 1995 թ. հունիսի 19-ին Բրյուսելում ստորագրված

"Հյուսիսատլանտյան պայմանագրի մասնակից պետությունների եւ "Գործընկերություն հանուն խաղաղության" ծրագրին մասնակցող այլ պետությունների միջեւ իրենց զինված ուժերի կարգավիճակի մասին" համաձայնագրի (ՆԱՏՕ/ԳՀԽ ԶՈՒԿ) եւ դրան կից 1995 թ. հունիսի 19-ի Լրացուցիչ արձանագրության դրույթները,

ցանկություն ունենալով ամրապնել պաշտպանության նախարարությունների միջեւ փոխհարաբերությունները ՄԱԿ-ի Կանոնադրության ոգուն համապատասխան,

մտադիր լինելով երկու երկրների պաշտպանության նախարարությունների եւ զինված ուժերի միջեւ համագործակցության միջոցով զարգացնել փոխվստահության մթնոլորտը,

ցանկանալով ստեղծել երկողմ համագործակցության շրջանակներում նախատեսված միջոցառումների կարգավորման իրավական հիմք,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### ՀՈՂՎԱԾ 1 Նպատակը

Սույն Համաձայնագրի նպատակն է Կողմերի միջեւ պաշտպանության ոլորտում համագործակցության իրականացման համար ստեղծել ընդհանուր եւ գործնական շրջանակ, ներառյալ Կողմերի կողմից մշակված ռազմական համագործակցության ծրագրերը:

### ՀՈՂՎԱԾ 2 Համագործակցության ոլորտները

2.1. Կողմերի միջեւ համագործակցությունը ներառում է հետեւյալ ոլորտները.

- ՆԱՏՕ-ի եւ ԳՀԽ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումներին մասնակցության վերաբերյալ փորձի փոխանակում,

- բազմազգ զինվորական ստորաբաժանումների կազմավորման եւ գործունեության խնդիրների վերաբերյալ փորձի փոխանակում,

- զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողություն,

- զինված ուժերի համար օրենսդրական դաշտի ձեւավորում,

- պաշտպանական քաղաքականություն եւ ռազմավարություն,

- պաշտպանական պլանավորում եւ բյուջետավորում,

- զինված ուժերի դեկավարում, վերահսկում եւ հաղորդակցություն,

- միջազգային խաղաղապահ եւ մարդասիրական գործողություններ,

- շրջակա միջավայրի պահպանության խնդիրներ եւ աղտոտման վերահսկում,

- քաղաքացիական արտակարգ իրավիճակների պլանավորում,

- թիկունքային ապահովում,

- փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ ոլորտներ:

2.2 Սույն հոդվածի 2.1 կետում նշված համագործակցության առնչվող կոնկրետ խնդիրները կարող են կարգավորվել սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերի միջեւ կնքվող առանձին համաձայնագրերով:

### ՀՈՂՎԱԾ 3 Համագործակցության ձեւերը

Պաշտպանական հարցերին առնչվող համագործակցությունը կիրականացվի հետեւյալ

միջոցառումների միջոցով.

ա) Համագործակցություն պաշտպանության նախարարությունների միջեւ.

- պաշտպանության նախարարների փոխադարձ այցեր,

- նախարարությունների պաշտոնատար անձանց փոխադարձ այցեր եւ

խորհրդակցություններ,

- երկողմ քննարկումներ եւ խորհրդակցություններ աշխատակազմերի միջեւ:

բ) Համագործակցություն գլխավոր շտաբների միջեւ.

- շտաբների պետերի փոխադարձ այցեր,

- երկողմ քննարկումներ եւ խորհրդակցություններ աշխատակազմերի միջեւ:

գ) Համագործակցություն այլ ռազմական հաստատությունների եւ

ստորաբաժանումների միջեւ.

- մասնակցություն ուսումնական եւ կոթական ծրագրերին,

- ռազմակրթական հաստատությունների միջեւ համագործակցության հաստատում,

ներառյալ ուսանողների եւ դասավանդողների փոխանակում,

- համատեղ գործունեության համապատասխան ոլորտներում փոխադարձ

այցելություններ, խորհրդակցություններ եւ փորձի փոխանակում:

#### ՀՈՂՎԱԾ 4

##### Պլանավորում եւ իրականացում

4.1. Սույն Համաձայնագրի հիման վրա մինչեւ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը պետք է մշակվի հաջորդ տարվա համագործակցության ամենամյա պլանը:

4.2. Համագործակցության ամենամյա պլանը պետք է մշակվի Կողմերի նախապես ներկայացված առաջարկների հիման վրա:

4.3. Համագործակցության ամենամյա պլանում նախատեսված յուրաքանչյուր միջոցառման համար յուրաքանչյուր Կողմ կնշանակի շփման կետ:

#### ՀՈՂՎԱԾ 5

##### Ֆինանսական կարգավորումներ

5.1. Այցելող Կողմը հոգում է դեպի հյուրընկալող Կողմի պետության տարածքը եւ հետադարձ ուղղությամբ ճանապարհածախսը, ինչպես նաև գործուղման եւ ապահովագրական ծախսերը:

5.2. Յյուրընկալող Կողմը հոգում է իր պետության տարածքում տրանսպորտային, կեցության եւ սննդի ծախսերը:

5.3. Յյուրընկալող Կողմը հոգում է անհետաձգելի բժշկական եւ ատամնաբուժական օգնության ու սպասարկման ծախսերը: Այլ բժշկական եւ ատամնաբուժական օգնության ու սպասարկման ծախսերը հոգում է Այցելող Կողմը:

Փոխադարձության այս հիմնական սկզբունքը չի կարող կիրառվել օժանդակ անձնակազմով (վարորդներ, թարգմանչներ եւ այլն) հանդերձ, ավելի քան 10 հոգուց բաղկացած խմբերի նկատմամբ: Այս խմբերի նկատմամբ կիրառելի ֆինանսավորման ընթացակարգերը կարգավորվեն Կողմերի միջեւ փոխադարձ գրավոր համաձայնությամբ՝ դեպքից դեպք սկզբունքով:

#### ՀՈՂՎԱԾ 6

##### Իրավագործություն եւ հայցապահանջներ

6.1. Կողմերի քրեական եւ կարգապահական իրավագործությունն իրենց անձնակազմերի նկատմամբ կարգավորվի ՆԱՏՕ/ԳՀԽ ԶՈՒԿ-ի դրույթների համաձայն:

6.2. Հայցապահանջները կրավարարվեն ՆԱՏՕ/ԳՀԽ ԶՈՒԿ-ի դրույթների համաձայն:

6.3. Հայցապահանջները եւ սույն հոդվածով նախատեսվող այլ տեղեկատվության փոխանակումը կիրականացվի 4-րդ հոդվածում նշված Կողմերի շփման կետերի միջոցով:

## ՀՈՂՎԱԾ 7 Տեղեկատվության փոխանակում

7.1. Սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված տեղեկատվության փոխանակումը կիրականացվի դիվանագիտական ուղիներով կամ Կողմերի միջև անմիջական շփումների միջոցով:

7.2. Կողմերը կծեռնարկեն բոլոր անհրաժեշտ քայլերը սույն Համաձայնագրի համաձայն իրականացված համագործակցության շրջանակներում ստացված գաղտնի տեղեկատվությունը չի ազդում քաշտապանելու համար: Նման տեղեկատվության բացահայտումը ինարավոր կլինի միայն տեղեկատվությունը տրամադրող Կողմի թույլտվությամբ:

## ՀՈՂՎԱԾ 8 Աշխատանքային լեզուն

Սույն Համաձայնագրի շրջանակներում անցկացվող միջոցառումների եւ իրականացվող նախագծերի աշխատանքային լեզուն անգլերենն է:

## ՀՈՂՎԱԾ 9 Փոփոխություններ եւ վեճեր

9.1. Կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով՝ Կողմերը պետք է անցկացնեն խորհրդակցություններ եւ, անհրաժեշտության դեպքում, վերանայեն Համաձայնագիրը:

9.2. Սույն Համաձայնագրի մեջ կարող են փոփոխություններ եւ լրացումներ կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որոնք ծեւակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը համարվող գրավոր արձանագրություններով եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածով նախատեսված կարգով:

9.3. Սույն Համաձայնագիրը չպետք է հակասի Կողմերի ազգային օրենսդրությանը կամ միջազգային իրավունքի նորմերին: Հակասության դեպքում միջազգային իրավունքի նորմերն ու ազգային օրենսդրությունը կգերակայեն: Հակասությունների առաջացման դեպքում Կողմերը կտեղեկացնեն միմյանց:

9.4. Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կատարման հետ կապված տարածայնությունները Կողմերը կլուծեն միմյանց միջեւ խորհրդատվությունների ու բանակցությունների միջոցով եւ չեն դիմի որեւէ ազգային կամ միջազգային ատյանի կամ երրորդ կողմի:

## ՀՈՂՎԱԾ 10 ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

10.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար Կողմերի ազգային օրենսդրությամբ պահանջվող ընթացակարգերն ավարտելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից եւ գործում է անորոշ ժամկետով:

10.2. Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը կամ դուրս գալ դրանից՝ այդ մասին մյուս Կողմին 90 օր առաջ գրավոր ծանուցելու միջոցով:

10.3. Եթե Համաձայնագրի գործողությունը դադարեցվել է կամ Կողմերից որեւէ մեկը դուրս է եկել Համաձայնագրից, Կողմերը, անհրաժեշտության դեպքում, պետք է սույն Համաձայնագրից բխող երկկողմ ֆինանսական պարտավորությունները, հայցապահանջները, վեճերը եւ անվտանգության խնդիրները կարգավորելու նպատակով բանակցություններ վարել:

Կատարված է Ռիգա քաղաքում, 2005 թ. հունիսի 6-ին, երկու բնօրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, լատիշերեն եւ անգլերեն, ընդ որում, բոլոր տեքստերն եւ հավասարագոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման ընթացքում

տարածայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն  
տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006 թ. մայիսի 19-ից:

ՀՀԿԳՆՊ 2006/ 8(16), ԵՄՊ, 28.12.05, անգլերեն բաժին, հոդ. 12

## AGREEMENT

Between the Ministry of Defence of the Republic of Armenia and the  
Ministry of Defence of the Republic of Latvia concerning  
co-operation in the defence area

The Ministry of Defence of the Republic of Armenia and the Ministry of  
Defence of the Republic of Latvia,

hereinafter referred to as "the Party",

Recognizing the Agreement among the States Parties to the North  
Atlantic Treaty and the Other States Participating in the Partnership for  
Peace Regarding the Status of their Forces (NATO/PfP SOFA) done in Brussels  
19th of June 1995, with the Additional Protocol to the Agreement among the  
States Parties to the North Atlantic Treaty and the Other States  
Participating in the Partnership for Peace Regarding the Status of their  
Forces, done in Brussels 19th of June 1995;

guided by the wish to strengthen mutual relations between the  
Ministries of Defence in the letter and spirit of the Charter of the UN;  
keeping in mind the development of an atmosphere of mutual confidence  
by cooperation of defence ministries of both countries and their armed  
forces;

wishing to set forth the legal and practical framework arrangements for  
the implementation of bilateral co-operation activities in the defence  
area;

have reached the following understanding:

### Article I Purpose

The purpose of this Agreement is to provide an overall and practical  
framework for co-operation in the defence area between the Parties,  
including the implementation of military co-operation programs adopted by  
the Parties.

### Article II Areas of Co-operation

2.1. Co-operation between Parties covers following areas:

exchange of experience on participation in the activities conducted  
within the framework of PFP and NATO;

exchange of experience on the issues related to the formation and  
functioning of multinational military units;

democratic control of armed forces;

formation of legal framework for armed forces;

defence policy and strategy;

defence planning and budgeting;

command, control and communications;

international peace support and humanitarian operations;

environmental issues and contamination control;

civil emergency planning;  
logistics;  
other areas which are considered to be mutual interest.

2.2. Detailed issues of co-operation on the fields specified in para  
2.1. can be defined accurately by the detailed arrangements between the  
Parties concluded within the auspices of this Agreement.

### Article III Co-operation forms

Co-operation in the defence related matters would take place through  
the following activities:

- a) Co-operation between the Ministries of Defence:
  - i. Reciprocal visits by Ministers of Defence,
  - ii. Reciprocal visits and consultations of officials of the Ministries,
  - iii. Bilateral staff talks and consultations.
- b) Co-operation between the Chief Headquarters:
  - i. Reciprocal visits of Chiefs of Staff,
  - ii. Bilateral staff talks and consultations.
- c) Co-operation between other military institutions and units:
  - i. Participation in training and educational programs,
  - ii. Establishment of co-operation between the military educational  
institutions, including exchange of students and instructors,
  - iii. visits, consultations and exchange of experience in the relevant  
field of mutual activities.

### Article IV Planning and conduct

4.1. The annual plan of co-operation for the next year will be worked  
out by 1 December of the current year based on this Agreement.

4.2. The annual plan of co-operation will be elaborated on earlier  
agreed proposals submitted by the Parties.

4.3. Each Party will appoint a point of contact for each activity  
foreseen in the annual plan of co-operation and project concluded within  
the auspices of this Agreement.

### Article V Financial arrangements

5.1. The Visiting Party covers the travel expenses to and from the  
territory of the Hosting Part, as well as the travel allowances and the  
cost of insurance.

5.2. The Hosting Party covers the travel expenses within its territory,  
accommodation and meals.

5.3. The Hosting Party settles costs of emergency medical and dental  
care services. Costs of other medical and dental care services will be  
settled by the Visiting Party.

This general principle of reciprocity shall not be applicable to groups  
consisting of more than ten members including the support personnel (e.g.  
drivers, interpreters etc.). Funding procedures applicable to these groups  
shall be established on a case by case basis by mutual agreement in written  
between the Parties.

## **Article VI**

### **Jurisdiction and claims**

6.1. The Parties will exercise criminal and disciplinary jurisdiction over their own personnel in accordance with the provisions of NATO/PfP SOFA.

6.2. Claims will be handled in accordance with the provisions of NATO/PfP SOFA.

6.3. The Parties will exchange information through the points of contact referred to in Article IV, to whom claims are to be forwarded.

## **Article VII**

### **Exchange of information**

7.1. The exchange of information connected with the implementation of this Agreement will be conducted through diplomatic channels or directly between the Parties.

7.2. The Parties will make all necessary steps in order to protect classified information obtained within the framework of the co-operation according to this Agreement against unauthorised disclosure. Disclosure of such information shall be possible only with permission of the originating Party.

## **Article VIII**

### **Working language**

The working language for projects and activities under the auspices of this Agreement will be English.

## **Article IX**

### **Amendments and disputes**

9.1. The Parties will enter into consultations and, when necessary, review the Agreement on the request of one or both Parties.

9.2. This Agreement may be amended at any time by mutual agreement in writing between the Parties. These amendments are defined in the written protocols, which are considered to be an integral part of this Agreement, and come into force according to the provisions of Article 10 of this Agreement.

9.3. This Agreement is not intended to conflict with the national legislation of the Parties or with international law. In case of conflict, international law and national legislation will prevail. The Parties will notify each other in the event of any conflict arising.

9.4. Any dispute regarding the interpretation or application of this Agreement will be resolved through negotiations between the Parties at the lowest possible level and will not be referred to any national or international tribunal or other third party for settlement.

## **Article X**

### **Entry into effect, termination and withdrawal**

10.1. This Agreement will come into force on the date of receiving the last written notification, by which the Parties notify each other through diplomatic channels concerning the fulfilment of procedures under the national legislation required for its entry into force, and is concluded

for an unlimited period of time.

10.2. The Parties can terminate or withdraw from the Agreement at any time by giving ninety (90) days prior written notice to the other Party.

10.3. If the Agreement is terminated, or if any of the Party withdraws from the Agreement, the Parties will initiate negotiations to settle all outstanding mutual financial obligations, claims, disputes and security issues arising from this Agreement.

Signed in three originals, in Riga, on the 6 of June 2005, in Armenian, Latvian and English, each version being equally authentic.

In case of differences of interpretation, the English version will prevail.

The Agreement has entered into force on 19.05.2006.